

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ԼԻԲԱՆԱՆ ՊԻՏԻ ՉԻ ԸՏԵՏԻ ԻՐԱՔԻ ՕՐԻՆԱԿԻՆ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Իսրայել վերստին անբարեկեցիկ վերածնել է Լիբանանի Հարավը եւ քիչ մը անդին՝ Պէյրութ քաղաքի արուարձանները, մասնավորապես Գարկա քաղաքում:

Սկիզբը իսրայելացի երկու պատանդներու առանց պայմանի յանձնումն էր պատճառը, որուն վրայ, քանի մը օր ետք եկան անվտանգության իր հիսուսային սահմաններուն ապահովութիւնը ընդդէմ պարբերաբար հարուէն պատուհասող ֆաթիւշաններու, անվտանգ վերջնականապէս ամրագրուեցաւ Հրզպայլայի գիւնաբափութեան հրամայականը: Իսրայել, ինչպէս միշտ, այս անգամ եւս, յերկրած էր իր պատճառարանութիւնը, արդարացնելու համար Լիբանանի դէմ իր նիւթած նոր արկածախնդրութիւնը, որ պիտի գար ահեղագոր հարուած մը տալու անոր, որ կոչուած էր կարծես միջազգային ֆաղափարականութեան տխուր խաղերուն մնայուն նոյնպէս հանդիսանալու: Կ'ըսեն. «Մեծ տէրութիւններ իրենց կեղտոտ լաթերը վարժ են լուայ Լիբանանի մէջ»:

Իսրայելեան, այսպէս կոչուած «առասպելական», այսպէս «անպարտելի» քանակը 12 Յուլիսի 2007-ին լիբանանեան կուսակցութիւններէն Հրզպայլայի դէմ շրջապագերծեց անագորոյն պատերազմ մը, անբարեկեցիկ վերածնել երկրի, համարեա ամբողջ հարավը: Քանզու մենքը հասան մինչեւ մայրաքաղաքի մերձակայ շրջանները, արուարձանները, շատ անգամներ չի խնայելով մայրաքաղաքի կարգ մը կեղրոններ, ուր, կ'ենթադրուէր, Հրզպայլայ կայաններ ունեցած ըլլալ:

Ամբողջ ամիս մը ու չորս օր տնտեսութեամբ, օդային, ծովային ու ցամաքային կործանարար ուժգնական գործողութիւնները, որոնք ՄԱԿ-ի ուժեղ միջամտութեամբ, հրադադարով մը կանգ առին անվտանգ շարք մը առաջ, Լիբանանին արժեք 800 գոհեր (համաձայն ՄԱԿ-ի ընդհ. Քարտուղարի վկայութեան, մեծամասնութիւնը մանուկներ) 3628 վիրաւորներ եւ մօտ մէկ միլիոն տեղահանուածներ: Նոյնպէս, անգնահատելի համեմատութիւններու հասան նիւթական կորուստները: Փնացան անվտանգ 7 միլիոն ֆառակուսի մեթր բնակելի եւ առեւտրական տարածութիւններ, 70 կամուրջներ, օդակայաններ եւ այլն: Խիստ ծանր է գիւղատնտեսութեան եւ գրօսաշրջութեան տրուած հարուածը: Մինչեւ ներկայ հատուածը՝ Լիբանանի կորուստները կը գնահատուին ան-

## ԼԻԲԱՆԱՆԱՐԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԵՍ Է ԽԱՂԱՂԱՊԱՐ ՈՒԺԵՐՈՒ ԿԱԶՄԻՆ ՄԷՋ ԹՈՒՐԵԱԿԱՆ ԶՕՐՔԵՐՈՒ ԸՆԴԳՐԿՄԱՆ

Լիբանանի պատերազմին վերջ տալու նպատակով ՄԱԿ-ի կողմէ յայտարարուած զինադադարի որոշումը կը նախատեսէ նաեւ խաղաղապահ ուժերու ներկայութիւնը Լիբանան-Իսրայել սահմանին վրայ:

Բազմաթիւ երկիրներու շարքին, Թրքական կառավարութիւնը եւս պատրաստակամութիւն յայտնած է՝ մասնակցելու ՄԱԿ-ի հովանաւորութեան տակ գործող այդ զօրքին:

Լիբանանահայութիւնը մտահոգուած է խաղաղապահ ուժերու կազմէն ներս թուրքական զօրքի Լիբանան մուտքով: «Ազատութիւն» ռատիոկայանին տրուած հարցազրոյցի մը ընթացքին Լիբանանի խորհրդարանի հայ անդամ, Ս.Դ. Հնչակեան Կուսակցության ներկայացուցիչ Եղիա ձէրէճեան ըսած է թէ, լիբանանահայ համայնքը չընդունիր խաղաղապահ ուժերու կազմին մէջ թրքական մասնակցութիւնը: «Թուրքիան չի կրնար չէզոք ուժի դեր խաղալ Լիբանանի հարաւը», - շեշտած է Ընկ. ձէրէճեան:

Ան յայտնած է թէ, արդէն իսկ բողոքները սկսած են եւ հայ երեսփոխանները եւ հայ նախարարը Հնչակեան կուսակցության քաղաքական դիւանի հետ պատրաստելու վրայ են յայտարարութիւն մը,

որուն կրնայ յաջորդել հայկական երեք կուսակցութիւններու միատեղ յայտարարութիւնը՝ իրենց բողոքը յայտնելու այդ ուժերէն ներս թուրքիայի ներգրաւման հարցի կապակցութեամբ:

Ընկ. ձէրէճեան նաեւ կարծիք յայտնած է, որ Մերձաւոր Արեւելքի մէջ ռազմական գործողութիւններու սկսելու պատճառը միայն «Հրզպայլայ»-ի կողմէ իսրայելցի երկու զինուորներու առեւանգումը չէ, այլ «ընդհանրապէս, Լիբանանի մէջ «Հրզպայլայ»-ի գինեալ գոյութիւնն է», քանի որ «Հրզպայլայ»-ը՝ որպէս շիաներու կազմակերպութիւն, ուղղակի կապեր ունի Իրանի հետ՝ եւ կրօնական, եւ գաղափարախօսական, եւ մշակութային, նաեւ՝ ռազմական եւ տնտեսական»:

Լիբանանահայ պատգամաւորը յայտնած է, որ այդ հարցը կարելի էր լուծել խաղաղ ճանապարհով: «Կրնամ ըսել, որ Լիբանանի ժողովուրդի մեծամասնութիւնը «Հրզպայլայ»-ի գինեալ գոյութեան դէմ է, բայց այդ գէնքը առգրաւելու հարցով կը նախընտրէ խաղաղ բանակցութիւնները, որովհետեւ գէնքի ուժով այդ գէնքը «Հրզպայլայ»-էն գրաւելը մեզի համար կը նշանակէ երկիրը տանիլ դէպի դժոխք», - աւելցուցած է Եղիա ձէրէճեան:

## ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՆԱՐԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԿԸ ՆՃԷ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԵՒ ԿՄՏԵՂԾԷ ԸԱՅԿԱԿԱՆ ԸԱՐՑԵՐՈՒ ԸԱՄԱԽՄԲՈՒՄ



Ձախէն աջ՝ Ա. շարք - Դանիէլ Այտինեան, Լեւոն Գաիմեան, Յարութիւն Գոնոյեան, ձէրէճ Սիւլըր եւ ձէրէճ Քոթր. շարք - Փիթըր Տարագնեան, Չարլզ Փուշիկեան, Րիչըրտ Մուշեղեան եւ Յակոբ Անճեան

Ամերիկայի Հայկական Համագումարի առաջնորդութեամբ պատուիրակութիւն մը Օգոստոս 14-ին Քալիֆորնիոյ մայրաքաղաք Սաքրամենթոյի մէջ մասնակցեցաւ նահանգային խորհրդարանի նիստին, որու ընթացքին ներկայացուե-

ցաւ յատուկ բանաձեւ մը, որ կը պատուէ Քալիֆորնիա-Հայաստան յարաբերութիւնները եւ Սեպտեմբեր 21, 2006 թուականը կը հռչակէ «Հայաստանի Անկախութեան Օր»:

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԸԱՅԱՍՏԱՆ ԿԸ ԴԱՍՈՒԻ ԱՇԽԱՐԿԻ 79-ՐԴ ԵՐԿԻՐԸ

Հայաստան 79-րդ տեղը գրաւած է Ազատութեան Վիճակը Աշխարհի մէջ (State of World Liberty) կազմակերպութեան կազմած՝ 159 պետութիւններու ազատութեան մակարդակի ցուցակին վրայ»:

Երկրի մը ազատութեան մակարդակը որոշելու համար համար օգտագործուած են տարբեր ցուցանիշներ՝ անհատի ազատութեան միջնակարգ տնտեսական ազատութիւն, ինչպէս նաեւ Heritage Foundation, Wall Street Journal, Frasier, Cato, Freedom House եւ Reporters Without Borders կազմակերպութիւններու կողմէ կատարուած հետազոտութիւնները:

«Աշխարհը ազատ չէ» - կ'եզրակացնեն հետազոտութեան հեղինակները՝ յայտնելով, թէ աշխարհի ազատութեան միջին ցուցանիշը ընդամենը 56,9 է: Հայաստանի ցուցանիշը կը կազմէ 59,46:

«Աշխարհի ազատութեան քարտեզ»-ին վրայ ԱՊՀ երկիրներէն առաջինը Վրաստանն է, որ 59-րդն է: Ատրպէյճանը կը գրաւէ 137-րդ, Ուքրաինան՝ 87-րդ եւ Ռուսաստանը՝ 124-րդ տեղը:

Աշխարհի ամենաազատ պետութիւններու ցուցակին վրայ առաջին տասը տեղերը կը գրաւեն Էստոնիան, Իրլանտան, Գանատան, Չուեյցերիան, Իսլանտան, Պահամեան կղզիները, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը, Կիպրոսը եւ Նոր Զելանտան:

## ԻԼՄԱՍ ԱԼԻԵՒ. «ԵՐԿՐՈՐԴ ԸԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ ԱՏՐՊԷՅԱՆԸ ԹՈՅԼ ՉԻ ՏԱՐ»

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիև յայտարարած է, թէ Պաքուն թոյլ չի տար «իր տարածքին երկրորդ հայկական պետութեան ստեղծումը»:

«Մենք գիտենք, որ շատ երկրներու մէջ կան ազգային փոքրամասնութիւններ, ինքնավարութիւններ: Սակայն ըլլալ ազգային փոքրամասնութիւն չի նշանակէր, որ անջատողականութեան միջոցով բաժանել որեւէ պետութեան տարածք եւ ստեղծել ինչ-որ նոր պետութիւն», - Ատրպէյճանի դեսպաններու հետ կապուած հանդիպման ժամանակ յայտարարած է նախագահ Ալիև:

«Կ'ըսեն, թէ Լեւոնալին Ղարաբաղի մէջ բնակող հայերը պէտք է ինքնորոշուին: Այդ պարագային, ուրիշ երկիրներու մէջ եւս անոնք կրնան օգտուիլ ինքնորոշման իրաւունքին», - ըսած է Ատրպէյճանի նախագահը:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԱՅՍ ԱՄԵՆԸ ՁԵՌՆՏՈՒ ՉԷ ԱՅՆ ՄԱՐԴԿԱՆՑ, ՈՎՔԵՐ ԻՐԵՆՑ ԱՊԱԳԱՆ ԿԱՊՈՒՄ ԵՆ ՎԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՏ

Հայաստանում ներհիշխանական խուճապ է, եւ դրա վկայութիւնը միայն ՀՀ «գորհաճառաքը» չէ: Խուճապի թերեւս առաւել վառ նշան է դոլարի փոխարժէքի հետ տեղի ունեցող գործընթացը: Իհարկէ, 40 աստիճան շոգին ոչ միայն դոլարը, այլեւ նոյնիսկ դրա վրայ պատկերուած ԱՄՆ նախագահները ունեն լողալու ցանկութիւն: Բայց անդադար լողալը ուղղակի անհնար է, որովհետեւ ի վերջոյ ուժասպառ լինել կայ, խեղդուել կայ: Եւ ոչ միայն անընդհատ լողալն է անհնարին, այլեւ անընդհատ իշխանութեան մէջ լինելը: Հայաստանի վերնախաւը հասկացել է դա, կամ վերնախաւի մի զգալի մասը: Եւ այն խուճապը, որ առկայ է, վկայում է, թէ ոչ միայն հասկացել են, այլ նաեւ հասկացել են, որ ամէն ինչ կարող է տեղի ունենալ շատ աւելի շուտ, քան կարելի է պատկերացնել: Եւ քանի շուտ է, պէտք է օգտուել իշխանութեան հնարաւորութիւնից: Իսկ փոխարժէքը այդ հնարաւորութիւններից մէկն է, գուցէ լաւագոյններից մէկը: Արդէն նոյնիսկ մանկապարտէզի երեխային է պարզ, որ դոլարի ցածր փոխարժէքի պարագայում քիչ դրամով գնում է շատ դոլար: Թւում է, թէ ներկայում դոլար գնելը ձեռնառու չէ, քանի որ այն էժանանում է: Բայց միւս կողմից, դա ձեռնառու չէ այն մարդկանց համար, ովքեր իրենց ապագան կապում են Հայաստանի հետ, այսինքն այն քաղաքացիներին, ովքեր արտասահմանեան բանկային հաշիւներ չունեն, օֆշորային գօտիներում գրանցած ընկերութիւններ չունեն: Նոյն մանկապարտէզի երեխային էլ պարզ է, որ Հայաստանից դրսում այդպիսի հաշիւներ եւ ընկերութիւններ ունի իշխանութեան վերնախաւը եւ խոշոր գործարարները: Հետեւաբար նրանց համար առաւել նախընտրելի փող է դոլարը, քան դրամը: Եւ անհասկանալի թափանցիկ արագութեամբ նուազեցնելով դոլարը, նրանք կարողանում են բաւական էժան գնով կուտակել միլիոնաւոր դոլարներ՝ տրանսֆերտ ստացող քաղաքացիների եւ զբօսաշրջիկների հաշուին: Դա պէտք է անել հնարաւորինս արագ, քանի դեռ իշխանութեան են: Եւ անում են:

Սակայն անում են ոչ միայն քաղաքացու եւ զբօսաշրջիկի հաշուին: Միլիոններ են կուտակում

նաեւ Հայաստանում իրականացուող արտասահմանեան ծրագրերի հաշուին: Դրանք իրականացուած են դոլարով: Հասկանալի է, որ Հայաստանում այդ դոլարը վերածուած է դրամի, հետեւաբար որքան էժան գնեն, ասենք Լինսիի, կամ միջազգային վարկային ծրագրերի դոլարները, այդքան աւելի շատ կը գնեն: Անշուշտ նրանց չի մտահոգում, որ փոխարժէքի անկումը փաստօրէն թանկացնում է այդ դոլարներով իրականացուելիք ծրագրերի արժէքը: Եթէ օրինակ Լինսիի 60 միլիոն դոլարը մի քանի ամիս առաջ ծրագիրը կազմելու պահին հաշուարկուել է մի փոխարժէքով, ապա արդէն ծրագիրն իրականացնելիս, երբ դոլարը գալիս է Հայաստան, փոխարժէքը բոլորովին այլ է: 60 միլիոն դոլարի պարագայում գործ ունենք մի քանի միլիոն տարբերութեան հետ: Բայց այդ տարբերութեան հետ գործ ունենք մենք, Հայաստանի քաղաքացիներն: Իշխանութիւնը դրա հետ գործ չունի, իշխանութեան գործը իր գրպանի պարունակութեան հետ է:

Առաւել եւս, որ դոլարի փոխարժէքի սրընթաց տատանումը եւ նուազումը ուղղակի հիանալի հնարաւորութիւն է տալիս մանեւորի համար: Բանն այն է, որ օրինակ Լինսիի կամ որեւէ վարկային խոշոր ծրագիր իրականացնելիս, ինչպէս յայտնի է բոլորին, փողի որոշակի քանակութիւն դառնում է որոշ պաշտօնեաների «ստամոքսահիւթի արտադրութեան» հումք: Հետեւաբար ծրագրի իրականացման համար փողը միշտ պակասում է: Դրա վառ ապացոյցն է Լինսիի առաջին ծրագիրը, որի աշխատանքների մի զգալի մասը իրականացուեց ոչ այն ծաւալով, ինչ նախատեսուեց էր, որովհետեւ փողն արդէն չէր բաւականացնում: Օրինակ, Գիւմրիի շէնքերը կառուցուեցին մէկ երկու հարկ ցածր: Եւ անհասկանալի պարագայում դոլարի փոխարժէքի աճաբարութեամբ իշխանութիւնը ստանում է փողի պակասն արդարացնելու հիանալի տարբերակ: Փոխարժէքը նուազել է, ընդ որում ամէն օր, եւ անհասկանալի փողը պակասել է: Թէկուզ եւ նոր փող չտան, գոնէ հնի համար պատասխանատուութեան չեն կանչի:

ՋէՅՄՍ ՅԱԿՈՒԲԵԱՆ  
«ԼՐԱԳԻՐ»

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԴԵՌ ԱՌՋԵՒՈՒՄ ԵՆ

Այսօր ունենք այն, ինչ ունենք: Սերժ Սարգսեանը Քոչարեանի համար նահանջ է նախապատրաստում. այսինքն՝ խորհրդարանում մեծամասնութիւն է ստանում, յետոյ դառնում է նախագահ եւ այլն: Իսկ եթէ յանկարծ խորհրդարանում ՀՀ պաղպարական հատուածն ըմբոստանայ, Սերժի «թեւը» շատ արագ դաշինք կը կազմի նոյն «Բարգաւաճ Հայաստանի» հետ եւ նորից մեծամասնութիւն կ'ունենայ: Լաւ է մտածուած:

Եւ ինչո՞ւ է զբաղուած եղել ընդդիմութիւնը: Ճիշդն ասած՝ առանձնապէս ոչնչով: Բաժնի Յովհաննիսեանն օրումէջ Աւարայրի ճակատամարտ էր տալիս գրասենեակի կողպէքի համար, Արշակ Սաղոյեանը յայտարարում էր, թէ հայրենիքի փրկութեան բիւջէն վեցուկէս միլիոն դոլար է, Ստեփան Դեմիրճեանն այնքան քաղաքական խորաթափանցութիւն էր դրսեւորել, որ երկու անգամ ՀՀ նախագահի պաշտօնում առաջադրուելուց յետոյ ի վերջոյ ժամանակ էր գտել եւ առաջին անգամ մեկնել Ղարաբաղ եւ այլն:

Ինչեւէ: Առջեւում Օգոստոսն է, բայց դատելով ամէն ինչից, աշնանը ներքաղաքական կրքերը շիկանալու են: Աւելի ճիշդ՝ ներհիշխանական «ուզբոքականներն» են սրանալու: Մի կողմից՝ «Բարգաւաճ Հայաստան» է փորձելու ծաւալուել, միւս կողմից՝ ՀՀ-ի ներսում են «գիրքային մարտեր» ընթանալու: Բայց այս ամէնը հնարաւոր չի լինելու կոծկել: Հաւատացնում ենք՝ ե՛ւ արդիկոտ քրէական գործեր են յարուցուելու, ե՛ւ ձեռքաւարկութիւններ են լինելու: Այնպէս որ, ձանձրանալու առիթ չենք ունենայ:

ՀՐԱՅՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ  
«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Ֆայտիկ Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանն իրար չեն վստահում: Իհարկէ վստահում են: Պարզապէս նրանք իրար հետ չափազանց երկար ճանապարհ են անցել, եւ նրանցից իւրաքանչիւրը բազմիցս առիթ է ունեցել տեսնելու, թէ ինչպէս է միւսը վարուած իրեն 100 տոկոսով վստահողներին հետ: Այո, նրանք երկուսով յայտնուել են «կիսազբաղապիւրում», եւ եզրափակիչ մտնելու համար երկուսն էլ պիտի յաղթեն իրենց հակառակորդներին: Իսկ «Բարգաւաճ Հայաստան» ամենեւին էլ Սերժ Սարգսեանի դէմ չի ստեղծուել: Աւելի շուտ՝ այն ստեղծուել է ՀՀ-ի դէմ: Այսինքն, ստեղծուել է այն դէպքի համար, եթէ յանկարծ Սերժ Սարգսեանը չկարողանայ ամբողջովին «իրենով անել» ՀՀ-ն եւ լիովին վերահսկելի դարձնել այդ կուսակցութիւնը: Այլ կերպ ասած, եթէ Քոչարեանը 100 տոկոսով վստահ լինէր, որ Սերժ Սարգսեանը «վերցնելու է» ՀՀ-ն, «Բարգաւաճ Հայաստան» ստեղծելու խնդիր չէր առաջանայ: Ինչեւէ:

գործուող սիցիլիական ոճի սպանութիւններով: Կարող ենք վստահ ասել, որ եթէ ինչ-որ հրաշքով մեր օլիգարխները լցուէին իտալիայի խորհրդարան, ապա երեւի թէ այդ չքնաղ երկիրը 1-2 տարում դառնար Բուրկինա Ֆասոյից չտարբերուող մի բան:

«ԻՐԱՒՈՒՆՔ»

ՇԱԲՈՒԱՅ ԶԱՐՄԱՆԸ

Մենք, որպէս կանոն, զարմանում ենք իշխանութեան ներկայացուցիչների եւ իշխանամէտ գործիչների վրայ, սակայն երբեմն մեզ զարմանք են պատճառում եւ ընդդիմադիրները: Այսպէս, ԱԺՄ նախագահ ՎԱԶԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ նորմալ է վերաբերուած այն իրողութեանը, որ վիկտոր Դալլաքեանը գնում է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւն: Իսկ վերջինս, ինչպէս յայտնի է, իշխանամէտ կուսակցութիւն է, քանզի համարում է Ռոբերտ Քոչարեանի յենարաններից մէկը. հենց այն Ռոբերտ Քոչարեանի, որի հեռացումն իշխանութիւնից բազմիցս պահանջել է ինչպէս ընդդիմութիւնն ամբողջապէս, այնպէս էլ վազգէն Մանուկեանը՝ մասնաւորապէս:

Հերթական անգամ մեզ զարմացրեց ԱԺ խօսնակ ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆԸ՝ յայտարարելով. «Եթէ գործարարի յայտնուելը խորհրդարանում կարող է երկրի համար վտանգ ներկայացնել, ապա իտալիան վաղուց պէտք է վերացած լինէր երկրի երեսից»: Եթէ հետեւենք այն զարմանալի տրամաբանութեանը, որ գործարար պատգամաւորը անվիճելի բարիք է երկրի համար, ապա Հայաստանը պէտք է գերազանցած լինէր իտալիային: Սակայն պրն Թորոսեանը զարմամալիօրէն մոռանում է մեր եւ իտալական գործարարների տարբերութեան մասին, որի շնորհիւ իտալիային սկսում ենք արագօրէն հասնել միայն օրը ցերեկով իրա-

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ԱՌՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ԽՍԲԱԳԻՐ՝  
 SOFEO. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱԳԱ ԹՈՒԹՅԵԱՆ  
 ՎԱՅԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
 Գեռ. (626) 797-7680  
 Ֆաքս. (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social  
 Democratic Hunchakian Party of  
 Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second  
 Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail),  
 \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in  
 US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
 MASSIS WEEKLY  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104



ԼՈՒՐԵՐ

ԱՐԹՈՒՐ ԲԱՂՂԱՍԱՐԵԱՆ. «ԿՐԻՄԻՆԱԼԸ ՎԱՍԱԽՍԲԻՈՒՄ Է ՅԱՅՏՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ»

«Կրիմինալը մտնում է քաղաքական դաշտ եւ համալսումը յայտնի կուսակցութիւնների շուրջ», - յայտարարեց «Օրինաց երկիր» կուսակցութեան նախագահ, Հայաստանի Ազգային ժողովի նախկին նախագահ Արթուր Բաղդասարեանը կուսակցութեան երկուստարական միութեան անդամների հետ հանդիպմանը, որ կայացաւ շաբաթօրը Աղանաձորում:



Հայաստանի Ազգային ժողովի նախկին նախագահ Արթուր Բաղդասարեան

Նրա խօսքերով, քրէական աշխարհի ներկայացուցիչները մուտք են գործում կուսակցութիւններ, «բռնութեամբ, ծեծելով, ահաբեկելով փորձում են իրենց գործն առաջ տանել, օլիգարխները հարկեր չեն մուծում, փողերը հաւաքում են, տալիս ժողովրդին, որ քուէներն առնեն»:

Հանրապետական կուսակցութեանը պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի անդամակցութեանը խորհրդարանի նախկին խօսնակը դրական է վերաբերում, քանի որ, ըստ նրա, գաղտնիք չէ, որ Սարգսեանը ստուերում միշտ էլ սատարել է Հանրապետական կուսակցութեանը, ուստի համագործակցութիւնը բաց, թափանցիկ քաղաքական դաշտ տեղափոխելը աւելի խրախուսելի էր. «Շատ լաւ է, որ Հայաստանում տեղի է ունենում բաց գործընթաց, որ մարդիկ տեսնում են, որ ոչ թէ ստուերային միջոցներով են կուսակցութիւններին աջակցում, այլ՝ բաց: Հիմա Սերժ Սարգսեանը կուսակցութեան խորհրդի նախագահն է, կուսակցութիւնն ունի երկու նախագահ, եւ առաջիկայում հրապարակային քաղաքական դաշտում կունկրտեւ երեւոյթներին եւ իրադարձութիւններին վարդապետական գործունէությունը շուրջ մենք մեր յստակ դիրքորոշումն արդէն կ'արտայայտենք»:

Ըստ «Օրինաց երկիր»-ի առաջնորդի, Հայաստանը հետո է ժողովրդավարական արժէքներից, քանի որ այստեղ չի գործում խօսքի ազատութեան ինստիտուտը, եւ ոչ էլ երբեք ազատ եւ արդար ընտրութիւններ են եղել:

«Ազատութիւն» ռադիոկայանի թղթակցի հետ զրոյցում Արթուր Բաղդասարեանը յայտարարեց, որ «Օրինաց երկիր»-ը վերսկսում է ակտիվ քաղաքական գործունէութիւնը եւ եղել:

Թիւնը եւ այն կը ծաւալի ընդդիմադիր դաշտում: Նա տեղեկացրեց, որ կուսակցութիւնն արդէն սկսել է քաղաքական երկխօսութիւնը եւ պարբերաբար քաղաքական շփումների մէջ է տարբեր կուսակցութիւնների հետ, որոնցից մի քանիսի հետ հնարաւոր է առաջիկայում համագործակցել. «Մեր երկիրը, հասարակութիւնը փոփոխութիւններ են ակնկալում, եւ բոլոր այն ուժերը, որոնք պատրաստ են իրենց շահերը դնել մի կողմ եւ համագործակցել յանուն այդ փոփոխութիւնների՝ մենք պատրաստ ենք»:

Միաժամանակ, Արթուր Բաղդասարեանի խօսքերով, «Օրինաց երկիր»-ը կուսակցութիւնների հետ դաշինք կազմելու անհրաժեշտութիւն դեռ չունի: Կոալիցիայից դուրս գալուց յետոյ կուսակցութեան շարքերը համալրուել են 15 հազար նոր անդամներով, որոնք, «Օրինաց երկիր»-ի նախագահի բնորոշմամբ՝ «ուղղակի ցուցակներ չեն», ինչպէս «միւս յայտնի» կուսակցութիւնների պարագայում է: Իսկ դա նշանակում է, որ չնայած 11 պատգամաւորներ, նաեւ նախարարներ եւ այլ պաշտօնեաներ լքեցին «Օրինաց երկիր»-ի շարքերը, այնուամենայնիւ կուսակցութիւնը քաղաքական թիմ ունի:

Արթուր Բաղդասարեանը համոզուած է, որ նոյնիսկ առանց որեւէ կուսակցութեան հետ դաշինք կազմելու «Օրինաց երկիր»-ը կարող է անհրաժեշտ թուով ձայներն ստանալ 2007-ի խորհրդարանական ընտրութիւններում: «Հայաստանում չի եղել ընտրութիւն, որ «Օրինաց երկիր»-ը մասնակցի ու պարտուի: Մենք յաղթել ենք ե՛ւ 1999-ին, ե՛ւ 2003-ին, ե՛ւ, վստահ եմ, 2007-ին...», - յայտարարեց խորհրդարանի նախկին խօսնակը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ ՕՐՇՆԵՐԳԻ ՎԱՐՑՈՒՄ ՏԱՐԱԿԱՐԾԻՔ ԵՆ

Հայաստանի նախկին վարչապետ, Ազգային ժողովրդավարական Միութեան նախագահ Վազգէն Մանուկեանը կտրականապէս դէմ արտայայտուեց պետական օրհներգի փոփոխութեան հարցն ընդհանրապէս քննարկելուն եւ յայտարարեց, որ երբ խորհրդարանում այդ հարցը դրուի, ինքն այդ դիրքորոշումն է արտայայտելու:

Ազգային ժողովում Դաշնակցութեան խմբակցութեան քարտուղար Գեղամ Մանուկեանը յայտնեց, որ ամենայն հաւանականութեամբ, Դաշնակցութիւնը հանդէս կը գալ օրէնսդրական նախաձեռնութեամբ, որով Հայաստանի պետական օրհներգ կը սահմանուի ներկայիս օրհներգը՝ «Մեր Հայրենիք»-ը:

Օգոստոս 10-ին մրցութային յանձնաժողովը հրապարակեց մրցութի երկրորդ փուլ անցած հինգ ստեղծագործութիւնները, որոնց թւում ներկայիս օրհներգը՝ «Մեր Հայրենիք»-ը, չկայ: Օրհներգի մրցութի առաջին փուլում ամենաշատ ձայները Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութեան խօսքերով Մանուկեանի գրած ստեղծագործութիւնն է հաւաքել:

ԱԲԵՏԻՔ ԻՇԽԱՆԵԱՆ. «ՈՐՏԵՂ ԶԻ ԳՈՐԾՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ, ԱՅՆՏԵՂ ԳՈՐԾՈՒՄ Է ԱՅՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ»

Հրագէնի կիրառմամբ սպանութիւնները Հայաստանում հետեւանք են այն բանի, որ իրաւապահ մարմինները ոչ պրոֆեսիոնալ են եւ բոլորովին այլ գործունէութեամբ են զբաղուած՝ «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում այս կարծիքը յայտնեց իրաւապաշտպան, Հայաստանի Հելսինկեան կոմիտէի նախագահ Աբետիք Իշխանեանը:

Վերջին ամիսների ընթացքում Հայաստանում երկու դէպք է արձանագրուել, երբ գինուած հաշուեյարդարների գոհ են դարձել պատահական մարդիկ:

«Իրաւապահ մարմինները հիմնականում ծառայում են իշխանութիւններին որպէս յենարան՝ ցանկացած ժամանակ ընդդիմութեան, իրենց անհաճոյ լրատուամիջոցների նկատմամբ գործ սարքել, ճնշել, կոռումպագուել: Որտեղ չի գործում արդարադատութիւնը, այնտեղ գործում է այլ արդարադատութիւն», - ընդգծեց Աբետիք Իշխանեանը:

Իշխանութիւնները, ըստ իրաւապաշտպանի, չեն կարող քաղաքական կամ դրսեւորել եւ իրաւապահներից պահանջել զբաղուել իրենց բուն գործով, քանի որ երբ գալ իշխանութիւններին, օրինակ՝ ընտ-

րութիւնների կեղծման գործում աջակցելու խնդիրը, վերջինները դարձեալ յենուելու են այդ կառույցների, ինչպէս նաեւ այն գինուած խմբաւորումների վրայ, որոնք այժմ փողոցներում հաշուեյարդարներ են կազմակերպում:

Աբետիք Իշխանեանի համոզմամբ, այդ խմբաւորումները վտանգ են ներկայացնում նաեւ իշխանութիւնների համար, սակայն «տպաւորութիւն կա, որ նրանք այդ վտանգը դեռեւս չեն գիտակցում, քանի որ իրենց չի առնչուել»: Նա չբացառեց, որ ինչ-որ ժամանակ իշխանութիւնները «չենց իրենք առնչուեն այդ վտանգին, երբ այդ ամէնն արդէն անվերահսկելի դառնայ»:

Ամենալուրջ խնդիրներից մէկը իրաւապաշտպանը համարում է հասարակութեան անտարբերութիւնը, ինչը մարդիկ պատճառաբանում են քաղաքականութեան նկատմամբ հետաքրքրութեան բացակայութեամբ: «Հայաստանում հասարակութեան անտարբերութիւնն արդէն հասել է այն մակարդակին, որ այդպիսի դէպքերը նոյնիսկ ընդհանրապէս ռեակցիա չեն առաջացնում», - յայտարարեց իրաւապաշտպանը:

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍԵԱՆԸ ԿՏՐԱԿԱՆԱՊԵՍ ԵՆՏՐՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ «ՎԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ»

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ, Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Տիգրան Թորոսեանը կտրականապէս հերքում է խորհրդարանի աշխատակազմի «հանրապետականացումը»:

«Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում նա տեղեկացրեց, որ լուծարուել են կառույցներ՝ երկու վարչութիւն, երկու ծառայութիւն, ընդ որում, իր համար «ոչ մի նշանակութիւն չունի, թէ ով որ կուսակցութիւնից է, ով որ կուսակցութեան ղեկավար կազմի մէջ է եւ այլն»:

«Եթէ խորհրդարանի աշխատակազմի լուծարումների հետ կապուած՝ մարդիկ խօսում են կուսակցական խնդիրների մասին, նշանակում է՝ համարում են, որ խորհրդարանում եղել են կառույցներ, որոնք կուսակցական ենթատեքստում էին», - յայտարարեց Ազգային ժողովի նախագահը, աւելցնելով, որ դրանով իսկ չի շեղ մարդիկ «չատ վատ վիճակի մէջ են դնում» Ազգային ժողովի նախկին նախագահ, «Օրինաց երկիր» կուսակցութեան ղեկավար Արթուր Բաղդասարեանին: Կուսակցական խնդիրը, ըստ

Տիգրան Թորոսեանի, Ազգային ժողովի աշխատակազմի հետ բացարձակապէս կապ չունի, եւ «այն կառույցները, որոնք կապ չունեն Ազգային ժողովի գործունէութեան հետ, լուծարուել են»:

Նա նաեւ յայտնեց, որ խորհրդարանի աշխատակազմի լուծարումը կառույցներում եղել է մօտ 35 հոգի:

Ամռան սկզբին, երբ Տիգրան Թորոսեանը նոր էր ընտրուել խորհրդարանի նախագահ, Ազգային ժողովի աշխատակազմում կար մօտ 500 աշխատակից:

Հայաստանեան մամուլը գրել էր, որ գործադիր իշխանութեան կառուցուածքում եւ Ազգային ժողովի աշխատակազմում նշանակալի բոլոր պաշտօնները կուսակցականացուած են՝ այդ պաշտօններն զբաղեցնող անձանց առաջարկում է Հանրապետական կուսակցութեան անդամակցութիւն կամ հրաժարական: «Օրինաց երկիր» կուսակցութեան փոխնախագահ Մհեր Շահագեղեանը եւս յայտարարել էր վարչական համակարգի տարբեր օղակների պարտադիր «հանրապետականացման» մասին:

ՎԻԿՏՈՐ ԴԱԼԼԱՔԵԱՆԸ ԴՈՒՐՄ ԵԿԱԲ «ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

Հայաստանի Ազգային ժողովի «Արդարութիւն» ընդդիմադիր խմբակցութեան անդամ Վիկտոր Դալլաքեանը դուրս է եկել խմբակցութիւնից:

Վիկտոր Դալլաքեանը դիմում է ներկայացրել «Արդարութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Դեմիրճեանին:

Մեկնաբանելով այն տեղեկութիւնները, ըստ որոնց Վիկտոր Դալլաքեանը մտադիր է անդամակցել «Բարգաւաճ Հայաստան»-ին, այդ կուսակցութեան ղեկավար անդամներից մէկը, ով չցանկացաւ ներկայանալ, «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց. - «Վիկտոր Դալլաքեանի պրոֆեսիոնալիզմը եւ ժողովրդականութիւնը եւ Գագիկ Ծառուկեանի կազմակերպչական ու ֆինանսական հնարաւորութիւնները կարող են լուրջ գործն դառնալ Հայաստանի ներքաղաքական կեանքում»:

Չի բացառուում Վիկտոր Դալլաքեանի՝ Ազգային ժողովի նախագահի պաշտօնում ընտրուելու հնարաւորութիւնը:



**ԼՈՒՐԵՐ**

**FREEDOM HOUSE. «ՇԱՅԱՍԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱԾ ԲՈԼՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՌԻՂԵԿՑՈՒԵԼ ԵՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ»**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
«Անկախութիւնից յետոյ Հայաստանում տեղի ունեցած բոլոր համընդհանուր ընտրութիւնները այս կամ այն չափով ուղեկցուել են լցոնումներով, քուէարկութեան կեղծումներով եւ նման այլ խախտումներով», - ասուած է Freedom house միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան հրապարակուած գեկոյցում, որտեղ վերլուծուած է ժողովրդավարութեան վիճակը աշխարհի 30 երկրներում:

«ԵԱՀԿ-ի եւ Եւրախորհրդի դիտորդները լուրջ խախտումներ են արձանագրել Հայաստանեան վերջին խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններում: Նրանք փաստել են, որ ընտրութիւնները չեն համապատասխանել արեւմտեան չափանիշներին: Նման յայտարարութիւնները աւելի մեծ կշիռ են հաղորդում ընդդիմութեան այն պնդումներին, որ ընտրութիւնները ակնյայտօրէն կեղծուել են», - փաստում են գեկոյցի հեղինակները:

«Ռոբերդ Քոչարեանը երկու անգամ՝ 1998 եւ 2003 թուականներին հուշակուել է լուրջ խախտումներով անցկացուած նախագահական ընտրութիւնների յաղթող: Քաղաքական ընդդիմախօսները հրաժարուել են ճանաչել նրա լեգիտիմութիւնը: Քոչարեանի վարչակազմի գործունէութիւնը մարդու իրաւունքների պաշտպանութեան ոլորտում միջազգային հանրութեան կողմից շարունակաբար թերի է որակուում: Իրավիճակն այս բնագաւառում սահագնացաւ 2004 թուականին, երբ իշխանութիւնները աննախադէպ ճնշման ենթարկեցին Հայաստանի ընդդիմութեանը՝ ներառեալ ձերբակալութիւնները եւ նոյնիսկ բռնութիւնը», - նշուած է իրաւապաշտպան կազմակերպութեան գեկոյցում:

«Անցած տարուայ Նոյեմբերի 27-ին կայացած վիճակարոյց սահմանադրական հանրաքուէն աւելի ընդգծուած դարձրեց երկրում ձեւաւորուած ընտրական կեղծիքի մշակոյթը: Եւրախորհրդի դիտորդական խումբը լուրջ կասկածի տակ առաւ պաշտօնական արդիւնքների հաւաստիութիւնը: «Ընտրողների չափազանց ցածր ակտիվութիւնը չի համապատասխանում այն բարձր թուերին, որոնք հրապարակել են ընտրական յանձնաժողովները», - յայտարարեցին դիտորդները: Հայաստանի ընդդիմութիւնը, որը բոյ-

կոտեց քուէարկութիւնը, պնդում է, որ հանրաքուէին մասնակցել է ընտրողների մօտ 16 տոկոսը», - փաստում է Freedom house-ը:

Միաժամանակ կազմակերպութիւնը նշում է, որ Հայաստանի ժողովրդավարացմանը խոչընդոտում է կառավարման խիստ միակողմանի համակարգը, որը լայն իշխանութիւն է պարգեւում հանրապետութեան նախագահին: «Հանրաքուէով հաստատուած սահմանադրական փոփոխութիւնները այդ իշխանութեան մի մասը փոխանցում են կառավարութեանը եւ խորհրդարանին: Նախագահն, օրինակ, այլեւս չի կարողանալու պաշտօնագրկել վարչապետին եւ ինքնակամ լուծարել խորհրդարանը: ԱՄՆ-ը, Եւրամիութիւնը եւ Եւրախորհուրդը հաւանութիւն են տուել այս փոփոխութիւններին: Սակայն Հայաստանի ընդդիմութիւնը դրանք բաւարար չի համարում եւ պնդում է, որ իշխանութիւնները, նախեւառաջ, պէտք է յարգեն գործող օրէնքները: Չնայած սահմանադրական բարեփոխումներին, Հայաստանի նախագահը պահպանելու է պետական ամենահզօր պաշտօնատիր կարգավիճակը»:

Անդրադառնալով մամուլի ազատութեանը, գեկոյցի հեղինակները կարծիք են յայտնում. «Հայաստանի լրատուամիջոցները գործում են անբարեացակամ միջավայրում: Իշխանութիւնները շարունակում են խիստ վերահսկողութեան տակ պահել պետութեանը պատկանող Հայաստանի հանրային հեռուստատեսութիւնը եւ գործնականում բոլոր մասնաւոր հեռուստալայնները, որոնք պատկանում են Քոչարեանի նկատմամբ լռեալ տրամադրուած գործարարներին եւ հազուադէպ են հեռարձակում նրա վարչակազմին քննադատող նիւթեր: Դրանց թղթակիցները ենթադրաբար աշխատում են խմբագրական գրաքննութեան պայմաններում»:

Ձեկոյցի համահեղինակ Քրիս Ուոլթերը «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում փաստել է. «Կովկասի բոլոր երկրները գործ ունեն թոյլ ինստիտուտներ, խորհրդային ժառանգութեան եւ դրան ուղեկցող կաշառառութեան հետ: Մեր ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ այդ խնդիրները յաղթահարմանն ուղղուած ամենալուրջ ջանքերը գործադրում է վրաստանը»:

**«ԿԱՐՈՂ Է ԱՐԴԵՕՔ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԿՍԵԼ ԴԱՐԱԲԱՂՈՒՄ»**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Կարող է արդեօք Ատրպէյճանը ռազմական գործողութիւններ սկսել Ղարաբաղում՝ այս հարցն է քննարկում այսօրուայ իր համարում «Նեգալիսիմայա գագետա» թերթը:

Պահեստի գնդապետ, ռազմական փորձագէտ Ուզգէր Զաֆարովի կարծիքով՝ գրաւեալ տարածքների ազատագրման նպատակով ռազմական գործողութիւնների ծաւալման եւ համընդհանուր զորահաւաքի յայտարարման դէպքում Ատրպէյճանի ռազմական խմբաւորման թուաքանակը՝ կանոնաւոր զօրքի հետ միասին կը կազմի 180 հազար զինուորական:

«Ռազմական գործողութիւնները կարող են սկսուել ինչպէս պաշտօնական յայտարարութիւնից, այնպէս էլ յանկարծակի: Ռազմական գործողութիւնների սկսուելուց յետոյ արդէն մեր երկիրը կարող է ՄԱԿ--ին եւ հարեւան երկրներին տեղեակ պահել այդ գործողութիւնների նպատակի մասին», - ասել է Զաֆարովը:

Նա համոզուած է, որ լայնածաւալ ռազմարշաւի դէպքում, եթէ

զինուած ուժերը պատրաստ լինեն կատարելու իրենց առջեւ դրուած խնդիրը, լրացուցիչ զօրահաւաքի կարիք չի լինի:

«Այսօր առաջին գծում գտնուող ռազմական ստորաբաժանումները եւ պահեստային զօրամասերը կարող են առնուազն լուծել գրաւեալ տարածքների ազատագրման խնդիրը», - վստահեցրել է Ատրպէյճանցի փորձագէտը:

«Նեգալիսիմայա գագետա»--ն փաստում է, որ այս տարի պետք է ընդհատուի պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Ռամիզ Մելիքովին, ով հաւաստիացնում է, որ 2008 թուականին կ'աւարտուի երկրի զինուած ուժերը ՆԱՏՕ--ի չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացը:

**ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՆԱՐԱՆԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ**

Ծարուակուած էջ 1-էն

Նոյն այս առիթով, Նահանգային Խորհրդարանի դեմոկրատ մեծամասնութեան ղեկավար Տարիօ Ֆրոմըրը եւ Հանրապետական Կրէյկ Աղազարեան յայտարարեցին թէ, առաջին անգամ ըլլալով Նահանգային Խորհրդարանին ներս տեղեցնուած է Հայկական համախմբում մը, Ամերիկայի Գոնկրէսէն ներս տարիներէ ի վեր գործող Հայկական

«Մենք կը միանանք Քալիֆորնիոյ Հայկական համայնքին հետ միասին մեր երախտագիտութիւնը յայտնելու Ծերակոյտի եւ Խորհրդարանի անդամներուն՝ Հայկական Համախմբումի ստեղծման եւ այն բանաձեւերուն համար, որոնք կու գան պատուելու Հայաստանի արձանագրած յառաջդիմութիւնը, անցնող 15 տարիներու ընթացքին» յայտարարեց Հայկական Համագումար Հոգաբարձուներու Խորհուրդի



Հայ Ամերիկեան Խորհուրդի փոխատենագիտ Յակոբ Անէմեան եւ Վարիչ Տնօրէն Փիթըր Տարագնեան Խորհրդարանի դեմոկրատ մեծամասնութեան ղեկավար Տարիօ Ֆրոմըրի հետ

*Mark Your Calander*  
**Festival**  
**ARMENIAN INDEPENDENCE DAY**  
Sunday September 24, 2006  
Verdugo Park, Glendale  
**Հայաստանի Անկախութեան Փառատօն**  
Կիրակի, Սեպտեմբեր 24, 2006  
Կլէնտէյլի Վըրտուկօ Բարքին մէջ

Համախմբումի օրինակով:  
Նահանգային Ծերակոյտէն ներս եւսնոյնանման համախմբումի մը ստեղծումը պիտի յայտարարուի շուտով:  
«Ինծի համար պատիւ էր գործակցիլ Հայկական Համագումարի հետ, հայ համայնքի համար կարեւոր նկատուող հարցերու շուրջ», այս առթիւ յայտարարեց Տարիօ Ֆրոմըրը:  
Բանաձեւը, որ կը ոգեկոչէ Հայաստանի Անկախութեան 15-ամեակը, ներկա յացոռեցաւ նաեւ նահանգային Ծերակոյտէն ներս, Քալիֆորնիոյ Ծերակոյտի անդամներ Զարլզ Փուչիկեանի (Հանրապետական Ֆրեզնոյցէն), ձէք Սթոթի (Դեմոկրատ Փասատինայցէն), Ժոզէֆ Սիմիթեան (Դեմոկրատ Փալո Ալթոյցէն) եւ ձէք Սփիր (Դեմոկրատ Սէն Մաթէոյցէն):

անդամ եւ Արեւմտեան Ամերիկայի գրասենեակի ատենապետ Պրն. Ռիչըրտ Մուշեղեան: «Որպէս քալիֆորնիացի եւս ուրախ եմ որ, իմ նահանգս եղաւ առաջինը, որ կը նշէ Հայաստանի Անկախութեան տարեդարձը», աւելցուց ան:  
Մուշեղեանի կողքին հայկական պատուիրակութեան մաս կը կազմէին Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի փոխ հիւպատոս Յարութիւն Գոնոյեան, Հայկական Համագումար գրասենեակի տնօրէն Լենա Գաիմեան, Հայ Ամերիկեան Խորհուրդի Վարիչ Տնօրէն Փիթըր Տարագնեան, Հայ Ամերիկեան Խորհուրդի փոխ ատենապետ Յակոբ Աճէմեան եւ Հայ Իրաւանց Խորհուրդի ներկայացուցիչ Դանիէլ Այտինեան:



ԱԶԳԱՅԻՆ

ՊՈՏԵՆՑԻԱԼ «ՔՅՈՂՆԵՐԻ» ՊԱՐԱԴՈՔՍԸ

ՅՈՒՂԱՆՆԵՍ ԳԱԼԱՋԵԱՆ

Յուլիսի 22-ից յետոյ, այսինքն, երբ պաշտօնապէս ամրագրուեց Սերժ Սարգսեանի տարատեսակ ռեսուրսներով ՀՀ-ն «սուպերկոնսակցութեան» վերածելու իրողութիւնը, Հայաստանի քաղաքական դաշտում ստեղծուեց մի ջրբաժան: Այսօր, երբ խօսուում է որեւէ մէկի կողմնորոշման մասին, հարց է հնչում. «Սերժի կողմն է, թէ՞ Սերժի դէմ»: Այսինքն, ըստ էութեան, ամէն ինչ հասաւ առաւելագոյն պարզութեան եւ տեղադրուեց սեւ-սպիտակի սխեմայի մէջ: Ինչ վերաբերում է երանգներին, ապա դրանք իրականում բացակայում են, ինչքան էլ այս կամ այն քաղաքական գործիչը զբաղուի «փիլոսոփայութեամբ» իր սեփական քաղաքական ուղեգծի երանգները ու նրբերանգների մասին:

Սերժ Սարգսեանի ինչպէս կողմնակիցները, այնպէս էլ հակառակորդները, լինում են անթաքտաց եւ քողարկուած, եւ օրինակ, պաշտպանութեան նախարարի դէմ հրապարակաւ խօսելը դեռեւս չի նշանակում, որ տուեալ քաղաքական այլը թաքուն չի հրահանգուում նոյն «սուպերնախարարի» կողմից: Իսկ թէ քաղաքական ո՞ր խոշոր միաւորն է հաստատ դէմ Սերժ Սարգսեանին՝ ապա «Բարգաւաճ Հայաստանի» եւ վերջինիս առաջնորդ Գագիկ Ծառուկեանի պարագան, անշուշտ, մտնում է այդ կատեգորիայի մէջ: Դրա համար կան այդ երկու գործիչների անցեալում առկայ որոշ փոխադարձ դրոշմակներ, որոնք ուղղակիօրէն բացատրում են, ժողովրդի խօսքով ասած, «լեզու գտնելը», եւ Ռոբերտ Քոչարեանը առաւել քան ճշգրիտ հաշուարկ էր կատարել, երբ իր յենարան կոնսակցութեան ձեւաւորումը վերապահել էր հենց Գագիկ Ծառուկեանին: Ու այսօր Գագիկ Ծառուկեան-Սերժ Սարգսեան անհաշտ հակամարտութեան եւ ՀՀ նախագահի ու պաշտպանութեան նախարարի միջեւ հակասութիւնների առկայութեան փաստը հրապարակաւ մատնանշում են նաեւ այնպիսի գործիչներ, ովքեր ժամանակին ասում էին, որ Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը իրական հակասութիւն երբեք չեն կարող ունենալ, եւ երեւացող հակասութիւններն ընդամենը «խօսացուած խաղ են»: Զորօրինակ, այժմ այդ հակասութիւնների մասին յստակ խօսում է «Հանրապետութիւն» կոնսակցութեան առաջնորդ Արամ Զ. Սարգսեանը, մշտապէս հրապարակաւ հանդէս է գալիս յեղափոխական ընդդիմութեան դիրքերից:

Ինչ վերաբերում է PR-ին, ապա քարոզչամեթոտան անընդհատ ի ցոյց է հանում այն, որ ՀՀ-ն գերհազգեցել է կրիմինալ եւ կիսակրիմինալ տարրերով, իսկ «Բարգաւաճ Հայաստանում» երեւում են հիմնականում մտաւորականները, ինչպէս նաեւ նրանք, ովքեր մշտապէս հանդէս էին գալիս ընդդիմադիր դիրքերից, գործօրինակ, հենց վերջերս «Արդարութիւն» խմբակցութիւնից հեռացած Վիկտոր Դալլաբեանը:

Անշուշտ, դա չի նշանակում, որ այդ կառոյցում սափրագլուխներ չկան. նրանց պարզապէս պահում են, պատկերաւոր ասած, «նկու-

ղում փակուած» վիճակում, եւ առայժմ կոնսակցութիւնը չեն համարում կառավարութեան անդամներով, թէեւ օրինակ, նախարար Դաւիթ Յարութիւնեանի պարագայում միանգամայն տրամաբանական է մտնել «Բարգաւաճ», այլ ոչ թէ առանձին կոնսակցութիւն ստեղծել:

Իսկ Սերժ Սարգսեանի թեւի տակ վազողները, բնականաբար, չինովնիկութեան մեծ մասն է ու օլիգարխները՝ մէկ-երկու բացառութեամբ, էլ չհաշուած այն տարրերին, որոնք հաստատ բանտ կը նստեն, եթէ Սերժ Սարգսեանը իշխանական ամուր դիրքեր չունենայ: Սակայն հետաքրքրականն այն է, որ թէեւ Սերժ Սարգսեանի շուրջ համախմբուելու վազում են շատերը՝ անեն դա բացայայտ թէ թաքուն, խոշոր հաշուով, նրանցից եւ ոչ մէկի վրայ պաշտպանութեան նախարարը յոյս դնել չի կարող: Օբիեկտիւօրէն բոլորն էլ հասկանում են, որ ժամանակի միտումները աշխատում են Սերժ Սարգսեանի դէմ, քանի որ Ռուսաստանում նրան աւելի ու աւելի շատ համարում են «դաւաճան», իսկ Արեւմուտքում հակուած չեն նրան վստահել, առաւել եւս, որ ամբողջ աշխարհի մասշտաբով գնալով աճում է անհանդուրժողականութիւնը քրէականացուած ռեժիմների նկատմամբ: Դրան գումարում է նաեւ այն, որ բոլորը հասկանում են այն պարզ իրողութիւնը, որ պատկերաւոր ասած, «անարիւն» տարբերակով «սուպերնախարարը» չի կարող տեղափոխուել նախագահական նստավայր: Այսինքն, գրեթէ բոլոր նրանք, ովքեր այժմ համայնքում են Սերժ Սարգսեանի շուրջ, լինեն դրանք օլիգարխներ, չինովնիկներ, թէ գաղտնաբար նրա ընդունարանը գնացող վերահսկող «ընդդիմադիրներ», նրան համարում են «գուրս գրման ենթակայ» ֆիզուր եւ առաջնորդուում են բաւականին պարզամտիկ մտածողութեամբ. այս պահին առաւելագոյնս օգտուել Սերժ Սարգսեանի ռեսուրսներից եւ «տանիքից», իսկ յետոյ յարմար պահին «քցել» նրան:

Այդ ինչդիրն օբիեկտիւօրէն թերեւս չի կարող չունենալ եւ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը, քանի որ գործնականում նրա համար դժուար թէ ընդունելի լինի ՀՀ-ում դեկավար դիրքերը գիշեր ցանկացած այլ անձնակազմութեան՝ լինի դա թէկուզեւ «սուպերնախարարը»: Անդրանիկ Մարգարեանը երեւի թէ հասկանում է, որ Սերժ Սարգսեանի բերած կազմերը իր համար չեն կարող լինել յուսալի յենարան, ու վերջին հա-

շուով ինքը կարող է յոյս դնել առաւելագոյն «հին հանրապետականների» վրայ: Բնականաբար, 2000-ից ի վեր արդէն 6 տարի «հար-էգուց գնալու» խօսակցութիւնների մշտական թիրախ այդ քաղաքական այլը, որը, ի վերջոյ, դարձաւ ՀՀ ամենաերկարակեաց վարչապետը, դժուար թէ պահեստային կամ նահանջի տարբերակներ մտածած չլինի: Այդ առումով պատահական չպէտք է համարել այն, թէ ինչու նա վերջերս յաճախ մեկնում է Ֆրանսիա, ինչը ենթադրաբար նշանակում է համապատասխան քաղաքական շփումներ, այսպէս կոչուած, պահպանողական եւրոպական ուղղութեան գործիչների եւ ուժերի հետ: Աւելորդ չէ յիշեցնել, որ Ֆրանսիայի ճամբան, պատկերաւոր ասած, յաճախ են նախընտրում եւ այնպիսի գործիչները, ինչպիսիք են Արթուր Բաղդասարեանը, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի շրջապատի որոշ մարդիկ, ինչպէս նաեւ Ռոբերտ Քոչարեանի շրջապատի որոշ ազդեցիկ դէմքեր: Այսինքն՝ կարելի է նաեւ ենթադրել, որ եթէ Անդրանիկ Մարգարեանին փորձեն զրկել լծակներից, ապա նա միգուցէ բաւականին արագ յարմարաւէտօրէն կը տեղաւորուի, այսպէս կոչուած, «ֆրանսիական բեւեռում»՝ իր հետ տանելով կոնսակցիցների հաւատարիմ հատուածին:

Այսպիսով, ստացում է պարզադրսալ վիճակ. Սերժ Սարգսեանը շրջապատուած է հիմնականում իրեն, մեղմ ասած, չհամակրող եւ թիկունքից հարուածելու յարմար առիթի սպասող մարդկանցով, ովքեր նրանից ակնկալում են ընդամենը մէկ բան՝ ժամանակաւոր անձնական շահ: Թոււմ է, թէ պաշտպանութեան նախարարն ունի չափազանց ոչ յուսալի քաղաքական բանակ, որի գրեթէ իւրաքանչիւր գիտուր իւրաքանչիւր պահի պատրաստ է դասալքութեան: Սակայն քանի որ անձնական շահ հետապնդողները եւ Սերժ Սարգսեանի ճամբար շտապողները առաւել քան ստուարաթիւ են, ապա արդիւնքում ստացում է այն, որ նա ձեռք է բերում այնպիսի մեծ լծակներ, որոնց պարագայում, կոպիտ ասած, «դէմը խաղ չկայ»: Այսինքն, վերջին հաշուով, այդ պոտենցիալ «քցողների» հակայական բանակը յայտնուում է հարկադրաբար հաւատարիմ ծառայողների կարգավիճակում, եւ երեւի թէ այդ գուտ քանակական առաւելութիւնը, ինչքան էլ այն ժամանակաւոր բնոյթ կրի, Սերժ Սարգսեանի համար դառնում է կարեւորագոյն գործօններից մէկը 2007-ին խորհրդարանական մեծամասնութիւնը գրաւելու համար: Բայց այնուամենայնիւ, Սերժ Սարգսեանը միայն ներքին լծակների վրայ յոյսը չի դնում:

Պատահական չէ, որ միաժամ-

մանակ եւ ՊՆ-ի, եւ ԱԳՆ-ի կայքերում յայտնուել է ՆԱՏՕ-ի «Գործընկերութիւն յանուն խաղաղութեան» ծրագրի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններն ամփոփող ծաւալուն փաստաթուղթը: Երբ դա ուսումնասիրում ես, ապա պարզորոշ համոզում ես, որ այդ «բարաթի» համեմատ Եւրախորհրդի առջեւ ստանձնած պարտաւորութիւնները, ժողովրդի լեզուով ասած, գլուխը պատով են տուել, ու եթէ այդ պարտաւորութիւնների թէկուզ կէսը ի կատար ածուի, ապա մեր երկիրը ընդմիջտ եւ անդառնալիօրէն ընդգրկուելու է Եւրաստլանտեան համակարգի մէջ՝ էսպէս գործընկերով» հետ: Պարզ է, որ այդ փաստաթուղթը ստեղծելու եւ Հայաստանին այդ պարտաւորութիւնների բեռի տակ դնելու գործում առանցքային դերակատարութիւն ունի Սերժ Սարգսեանը: Եթէ մինչ այդ նա ժիրայր Սեֆիւեանի թեւաւոր խօսքով ասած, իրագործում էր «ստանձնած քննարանազահի պաշտօնի դիմաց» ծրագիրը, ապա այս փաստաթղթով հաւատարմութեան երդում է տալիս ՆԱՏՕ-ին՝ ակնկալիք ունենալով, որ այդ ամէնի դիմաց աչք կը փակեն թէկուզեւ ամենակեղծուած ընտրութիւնների եւ բռնատիրական մեթոդներով իշխանութեան գաւթման ապագայ գործընթացի վրայ: Ուստի միանգամայն տրամաբանական էր, որ Սերժ Սարգսեանը շտապեց դա գետեղել հենց ՊՆ-ի պաշտօնական կայքում:

Ինչ վերաբերում է ԱԳՆ-ին, ապա չպէտք է մոռանալ, որ Վարդան Օսկանեանը նոյնպէս համարուում է Ռոբերտ Քոչարեանի հնարաւոր իրաւաջաջորդներից մէկը: Ուստի նա նոյնպէս պէտք է շտապեր սկզբում յայտարարել, որ ամբողջովին համաձայն է դարաբաղեան կարգաւորման՝ Մեթիւ Բրայզայի կողմից դէմ տուած ծրագրին, իսկ յետոյ վերը յիշատակուած պարտաւորութիւնները գետեղելով ԱԳՆ-ի կայքէջում, նոյնպէս ԱՄՆ-ին եւ ՆԱՏՕ-ին փաստացի հաւատարմութեան երդում տար: Եւ եթէ հաշուի առնենք նոյն Օսկանեանի՝ նախկինում ԱՄՆ քաղաքացի լինելու հանգամանքը (իսկ ոմանք պնդում են, որ նա այժմ էլ փաստացի մնացել է «ամերիկացի»), ապա պարզ է դառնում, որ արտգործնախարարը կարող է վաշինգտոնի աչքերում բաւականին յաջողութեամբ հաւասարակուել Սերժ Սարգսեանի գործօնը:

Սակայն կայ եւս մի հանգամանք, որը Սերժ Սարգսեանին ապագայում կարող է էսպէս խանգարել ուժային մեթոդներով մեծամասնութիւն ունենալու գործօնը:

Մար. ք էջ 17

Advertisement for A.B.A. Insurance Services. It features three logos at the top: Blue Cross of California, A.B.A. Insurance Services, and Blue Shield of California. Below the logos is the text: 'ԱՌԱՋԻՆ ԲԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԸ, ՈՐ ԶԵՁԻ ԿԸ ԲԱՅԱՏՐԷ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԱՊԱՆՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ' followed by 'Հեռ. 818-500-9585' and 'Այցելեցե՛ք www.HyeInsurance.com'.



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԳՐԷ՝ ԻՍՐԱՅԷԼԸ ԱՆՑԱԲ ԱՍԿԷ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ (Ձօն՝ Իսրայելի բարբարոսական յարձակման՝ Լիբանանի ժողովուրդին)

Իսրայելի ռազմատենչ պետութիւնը հերթական նոր յարձակման մը ձեռնարկած է Լիբանանի վրայ, իբրև արդարացում յառաջ քշելով «Չարիքի Արմատ» Հրզպալլայի ոչնչացումը: Անմարդկայնորէն վայրագ իսրայէլացի ղեկավարները կը սխալին սակայն, խորհելով որ իրենց գերակշիռ օդային ուժով Լիբանանը քարուքանդ ընելով կրնան Հրզպալլան ծունկի բերել: Որովհետեւ Հրզպալլան իր ազգային-կրօնական գաղափարաբանութեամբ ու նպատակներով Լիբանանի յատուկ կազմակերպութիւն է, այլ կը մարմնակերպ արաբ ժողովուրդներուն ազատագրական պայքարը, Իսրայելի բռնագրաւիչ ախորժակին եւ կայսերապաշտական ձգտումներուն դէմ արաբական մարտնչող ոգին, որ օրէ օր անկողով ու գործակալով պիտի ըլլայ անպարտելի բանակ, մինչեւ որ Իսրայէլացի ղեկավարները խելքի գալով պարտաւորուին արդար հիմերու վրայ ու խաղաղութեամբ ապրիլ իրենց արաբ դրացիներուն հետ:

Անմարդկային այս պատերազմը Լիբանանի քանդուածով չի վերջանար: Լիբանանի խաղաղ եւ անմեղ ժողովուրդը ջուրէ ու ելեկտրականութենէ զրկելով՝ ճամբաներ ու կամուրջներ, ժողովրդային շէնքեր ու տուններ քանդելով Հրզպալլան չի ջախջախուիր: Իսրայէլացի ղեկավարները անխիղճ ու վայրագ են, բայց ապուշ չեն հաւատալու որ այս միջոցներով արաբ ազատագրական ոգին խորհրդանշող Հրզպալլան կրնան ոչնչացնել: Բայց, անոնք կը հաւատան իրենց ըրածին, որ հաւասար է բարգաւաճ Լիբանանի ոչնչացման, տնտեսապէս հզօր, համաշխարհային դրամատուններու կեդրոն ու միջազգային թուրիզմի հրապուրիչ երկիր Լիբանանի քանդուածին նախանձի եւ անզօր մրցակցութենէ տարուած:

Երկու շաբաթ անցաւ, բայց իրենց անցած տեղը մահ ու աւեր սփռող իսրայէլացի բարբարոսները դեռ չկրցան ամբողջացնել Լիբանանի քանդուածը, կամ աւելի ճիշդ է ըսել, դեռ չէ յազեցած արիւննուշտ իրենց հոգին: Սողոմ Բոմորեան այդ տեսարանները բաւարար եղան ցնցելու Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարարը, որ հակառակ իր երկրին փրօ-իսրայէլեան դիրքին, չկրցաւ իր յուզումն ու զայրոյթը պարտկել: Աւելի վերջ այցելող Տիկին Ռայա Նոյն հոգեվիճակը ապրեցաւ, սակայն, պարոն Պուշէն իրեն սահմանուած պարտականութիւնը կատարած ըլլալու համար ան գինադուլի մը գաղափարը յառաջ քշեց, գինադուլ մը՝ գոր խանգարողներ չըլլան եւ ամուր հիմերու վրայ մնալուն ըլլայ: Իսրայէլ հասկցաւ իր տիրող message-ը եւ անմիջապէս մեկնաբանեց զայն, յայտարարելով, թէ

այդպիսի գինադուլ մը Հրզպալլայի չէզոքացումէն յետոյ միայն կրնայ իրագործուիլ: Կը հետեւցուի, ուրեմն որ այս բարբարոսութիւնը դեռ պիտի շարունակուի մինչեւ... մինչեւ Հրզպալլայի ոչնչացումը, որ երբեք ալ պիտի չպատահի: Որովհետեւ, Հրզպալլան ամն տեղ է, Լիբանանէն մինչեւ Եգիպտոս, Լիպիա եւ ԱՆՃԵՐԻԱ, մինչեւ Սուրիա, իրան եւ Աֆղանիստան եւ Փաքիստան՝ տարբեր-տարբեր անուններու տակ: Որով, Իսրայէլի թեւը որքան ալ ուժեղ ու քանդիչ ըլլայ, չի կրնար հասնիլ այս տարածութիւններուն: Նման արկածախնդրութիւն՝ իր տարբադարումին ու կործանումին համազօր է: Արաբական Դիմադրութիւնը կրնայ դանդաղ արիւնահոսութեան առաջնորդել Իսրայէլը: Ապացոյց՝ Հրզպալլայի հրթիռները, որոնք մահ ու աւեր կը սփռեն Հայֆայի եւ Հիւսիսային Իսրայէլի մէջ: Իրենց կատաղութեան մէջ կուրացած Իսրայէլացիները, հակառակ իրենց տրուած ազդարարութեան, կրակ տեղացին նաեւ Մ.Ա.Կ.ի



խաղաղարար ուժերուն վրայ՝ անոնց չորսին մահուան պատճառ դառնալով: Ուրեմն, Հրզպալլան կայ ու կը մնայ որպէս յաւիտենական մղձաւանջը Իսրայէլի ասպատակ պետութեան, թէեւ այս ասպատակութիւնն ալ, նախորդներուն պէս, վերջ կը գտնէ նախաշարձակներուն անփառունակ նահանջով: Եւ Լի-

բանան կը վերաշինուի աւելի շքեղ, աւելի բարգաւաճ ու հրապուրիչ՝ նախանձը գրգռելով Իսրայէլի վայրագ ղեկավարներուն: Վերջին քան տարիներուն ընթացքին Իսրայէլ նման բազմաթիւ յարձակումներ գործեց, որոնց բոլորն ալ վերջացան իր ամօթալի նահանջով: Այս մէկն ալ դատապարտուած է նոյն ճակատագրին:

**ՕԳՆԵՆՔ ԼԻԲԱՆԱՆԻՆ**

Անգամ մը ես վայրագ բռնարարներու եւ տակաւ շարունակուող պատերազմի զոհ կ'երթայ քովանդակ Լիբանանը:

Արդարեւ, օդային ուժակոծումներու զոհ գացած են բազմաթիւ անմեղ մարդիկ, տեղաբնակ դարձած են աւելի քան 800 հազար հոգի, որոնք կարծես ունին ամէն տեսակի օգնութեան (հագուստ, սնունդ, դեղորայք եւ ապաստարան): մէկ յօսքով Լիբանան դարձած է «Աղէտի Երկիր»:

Լիբանանահայութիւնը եւ կ'ապրի դժուարին օրեր: Հայկական թաղամասերը կը դիմագրաւեն կենցաղային, առողջապահական, սնունդի ապահովման, ջուրի եւ էլեքտրական հոսանքի դժուարութիւններ, որոնք հոգալու պարտականութիւնը ստանձնած են մեր քաղաքական եւ բարեսիրական կազմակերպութիւնները: Տնտեսական դժուարութիւններու եւ անգործութեան պատճառաւ սկսած է բազմապատիւ չքաւոր հայերու թիւը:

Հայկական կազմակերպութիւնները նաեւ օգնութեան ձեռք կ'երկարեն երկրի հարապային շրջաններէն հայկական թաղամասերը ժամանած գաղթականներուն:

Հայկական կրթական բարեսիրական Միութիւնը (Հ.Կ.Բ.Մ.) իր դարձանատուները եւ կրթական ու բարեսիրական կեդրոնները առանց խտրութեան քացած է բոլորին առջեւ, օգտակար հանդիսանալով եւ հոգալով ժողովուրդի կարիքներուն:

Ռազմական գործողութիւններու աւարտէն ետք իսկ, երկար ժամանակ, լիբանանահայութիւնը պէտք պիտի ունենայ հայաստանի եւ սփիւռքի օգնութեան՝ իր գոյութիւնը պահպանելու եւ արտագաղթի նոր հոսք մը կանխելու համար:

Ռատի, կոչ կ'ուղղենք սփռաբնակչութեան՝ գործնականօրէն գորակցիլ աղէտահար Լիբանանի կարօտեալներուն եւ անյապաղ մարդասիրական օժանդակութիւն ցուցաբերել հայութեան:

Տուրքէ զերծ ձեռ գումարները հաճեցէք առաքել կողքի հասցէին-

Հ.Կ.Բ.Մ. ԿԵԳՐՈՒՄԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Please write your tax-deductible contributions to:

**A.E.B.U. - Lebanon Fund**  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91104  
U.S.A.

FOR WIRE TRANSFERS:  
Bank Of America  
Account # : 02300-42530  
Routing # : 026009593

Massis Weekly on the Internet massisweekly.com



ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՍԹԵՆՖԵՐՏ ԸԱՍԱԼՍՐԱՆԻ ՄԷՋ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸԱՐՑԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ

ԱՄՆ-ի հեղինակաւոր Ստանֆորդի Համալսարանի Ժողովրդավարութեան, Զարգացման եւ Օրէնքի գերակայութեան կեդրոնում տեղի է ունեցել Հայաստանի քաղաքական եւ տնտեսական գերակայութիւններին նուիրուած գիտական նստաշրջան: Ընդարձակ վերլուծական զեկուցմամբ հանդէս է եկել ՀՀ Ազգային Ժողովի պատգամաւոր, տնտեսագիտութեան դոկտոր, փրոֆէսոր Թաթուլ Մանասէրեանը: Նա ներկայացրել է անկախութեան տարիներին Հայաստանում եւ տարածաշրջանում տեղ գտած հիմնական միտումներն ու զարգացումները, միաժամանակ անդրադառնալով Հայաստան-ԱՄՆ, Հայաստան-Եւրամիութիւն եւ հարեւան երկրների հետ յարաբերութիւնների որոշ կողմերի:



Աժպատգամաւոր փրոֆէսոր Թաթուլ Մանասէրեան

Քննարկումներին մասնակցել են աշխարհի 21 երկրներից հրաւիրուած փորձագէտներ: Գիտական կեդրոնում հալ գիտականի հետ հանդիպումներ են ունեցել Freedom House-ի նախագահ Փիթըր Էքըրմընը, USAID-ի փոխտնօրէն Մարիա Ռեւստոնը, Marshall Foundation-ի գործադիր տնօրէն

Ռանըլտ Ասմուսը, ինչպէս նաեւ IREX-ի նախագահ Մարկ Պոմարը, Միչիկընի Համալսարանի Փրոֆէսոր Ռանըլտ Սիւնին: Այցելութեան աւարտին Փրոֆ. Մանասէրեանին հիւրընկալել են Սան Ֆրանսիսքո Քրոնիքլի խմբագրութիւնում:

ՄԱՇՏՈՅ ԳՈՒԷԺԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐԸ

Մաշտոց Գոլէճի Մանկավարժութեան Բաժանմունքը չառաջիկայ Սեպտեմբեր 7էն - Դեկտեմբեր 23, 2006 տրամադրելի պիտի դարձնէ «Մանուկներու Դաստիարակութեան եւ կրթավարչագիտութեան» վեց դասընթացքներ Գոլէճի կլէնտէյլի կեդրոնին մէջ (411 E. Aca-cia) Հինգշաբթի օրեր կ.ե. ժամը 5:00-9:00 եւ Շաբաթ օրեր կ.ա. ժամը 10:00 - կ.ե. ժամը 2:00: Դասախօսն է՝ Տօքթ. Նորա Սահակեան:

Սոյն դասընթացքներուն հետեւող ուսանողներ իրազեկ պիտի դառնան երեխաներու աճման ու հոգեբանական զարգացման, կրթական երանգաւորումի, առողջապահական հարցերու, դպրոց-համայնք կապերու, ինչպէս նաեւ մանկավարտէզի, կառավարման հետ առնչուած պետական օրէնքներուն, ելեւմտացոյցի, ուսուցչուհիներու ընտրութեան, արձանագրութեան, հանրակրթական աղբիւրներու, ծնողք-ուսուցիչ փոխ-յարաբերութեան եւ այլ կարեւոր նիւթեր շօշափող մանրամասնութիւններու: Սոյն դասընթացքին պայմանները յաջողապէս ամբողջացնող ուսանողներ՝ իրաւունքը կ'ունենան սեփական կրթական հաստատութիւններու մէջ պաշտօնավարելու որպէս ուսուցչուհի կամ մանկավարտէզպանուհի:

Մաշտոց Գոլէճին ակադեմական բոլոր ծրագիրները վաւերացուած են Գալիֆորնիոյ նահանգին կողմէ: Յաւելեալ տեղեկութեանց համար՝ դիմել Մաշտոց Գոլէճ, հեռաձայնելով (818) 548-9345 թիւին:

GENERAL CONTRACTOR BID REQUEST

Qualified Engineering firms are invited to submit combined Statements of Qualifications and Proposals by 5:00 PM, September 20, 2006 for design and construction management services for the Taxiway D Extension project at the Bob Hope Airport. This project will be financed using a combination of Airport and federal funds. This project includes constructing the extension of Taxiway "D" including site work, asphalt and concrete pavement, striping, lighting and drainage. The selected firm will be responsible for preliminary design, detail design, cost estimating, bidding and construction management. This project has a 14% Disadvantage Business Enterprise component. A Request for Qualifications/ Proposal package can be obtained directly from the Bob Hope Airport Web site at bobhopeairport.com under Business Opportunities. All Proposers shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Proposals submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. A pre-proposal conference will be conducted on August 23, 2006 at 10:00 AM at the Burbank Airport Engineering Office, 2800 N. Clybourn, Second Floor, Burbank, California.

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԷԼԵԱՆԻ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐԸ՝ ԱՆԳԼԵՐԷՆ


Ամերիկեան «Author House» հանրածանօթ հրատարակչատունը վերջերս լոյս ընծայեց արձակագիր՝ Պօղոս Գուբէլեանի ամերիկեան պատմուածքներու զեղատիպ հատորը:

«Ամերիկեան Համանուագ» խորագրուած անգլերէն այս հաւաքածոն կազմուած է 18 պատմուածքներէ, ընտրուած՝ հեղինակին 1970-1980-ական թուականներուն հրատարակուած հատորներու հայերէն բնագրէն: Թարգմանութիւնը խղճմտօրէն եւ ձեռնհասութեամբ կատարած են դերասանուհի՝ Նորա Արմանի եւ գրող-քննադատ՝ Իշխան ձինպաշեան:

2004 թուականին, «Անտառը Մարդուն Մէջ» խորագրուած պատմուածքներու նոյն հաւաքածոն, Երեւանի մէջ ռուսերէնով լոյս տեսաւ, Նելսոն Ստեփանեանի թարգմանութեամբ:

Արդէն 1980-ին, Լա Վըրնի հայկական Գոլէճի հիմնադիր՝ Տօքթ. Արմէն Սարաֆեան կը ծրագրէր, համալսարանի հրատարակութեամբ, Գուբէլեանին ամերիկեան ենթահողով պատմուածքները, անգլիախօս հանրութեան ներկայացնել: Անոր վաղաժամ մահը 20 տարիով յետաձգել տուաւ ծրագրին իրագործումը:

«African Symphony» հատորին զեղարուեստական ձեւաւորու-



մը կատարած է հեղինակի որդին, ծանօթ արուեստագէտ-ֆիլմարտադրիչ՝ Հրաչ Գուբէլեան: Անգլերէն այս նոր հատորը կարելի է գտնել ամերիկեան եւ հայկական յայտնի գրապատճառներու մօտ: Կամ ալ ուղղակի ինթերնէթի միջոցով՝ հետեւեալ հասցէին դիմելով:

«African Symphony» Author Raymond Boghos Kupelian www.kupelianafrostories.com www.raymondkupelian.com

Advertisement for HARUT DER-TAVITIAN, License #0828270, 1807 W. Glenoaks Blvd., Suite 202 Glendale, CA 91201. Includes logo for EXCEL HYE INSURANCE SERVICES and list of services: AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL.

Advertisement for ART PHOTOGRAPHY by JACOB DEMIRDJIAN, TEL(626)795-4493. Features a clown image.



# HAMILET

**GLENDALE**  
**KIA**  
GENERAL SPONSOR

SHINING STAR  
FROM  
ARMENIA  
WITH  
HIS BAND  
SEPTEMBER  
9 & 10, 2006

## ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՐ ՆՈՐ ԵՐԳԱՅԱՆԿՈՎ ԵՒ 9 ՀՈԳԱՆՈՑ ՆՎԱԳԱՆՍԵՐՈՎ

**GLENDALE HIGH SCHOOL AUDITORIUM**

**1440 E. BROADWAY, GLENDALE**

**ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 9-ԻՆ, ԺԱՄԸ 7-ԻՆ**

**ԿԻՐԱԿԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 10-ԻՆ, ԺԱՄԸ 6-ԻՆ**


ՏՈՄՍԵՐԻ ԶՐԻ ԱՌԱՔՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (818) 265-0506 (818) 482-6131

ՏՈՄՍԵՐԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ CHATERIAN VIDEO (818) 242-6928

ANI GEOCERY (818) 241-7229 GLENOAKS VIDEO (818) 242-9009

ՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵՔԸ՝ 25, 30, 35, 40, 50 ԵՒ 75 ԴՈՒՆՐ

FOR INFORMATION CALL: KACH NAZAR (818) 246-0125





# Massis Weekly

Volume 26, No. 28

Saturday, August 19, 2006

## California Legislature Marks Armenian Independence Day Establishes First-Ever Armenian Caucus



Senator Charles Poochigian, ACA Executive Director Peter Darakjian, ACA Vice-Chairman Hagop Ajemian and Senator Jackie Speier

BEVERLY HILLS -- An Armenian Assembly-led delegation traveled to Sacramento on August 14 to welcome a bipartisan resolution in the State Legislature, honoring the California-Armenia relationship and designating September 21, 2006 as "Armenian Independence Day."

